10 փետրվարի 2025 թ

Արձանագրություն N 5

ՀՀԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող պետական հաստատությունների (Երևանի Վ.Թեքեյանի անվան թիվ 92 հիմնական դպրոց,Երևանի թիվ 105ավագ դպրոց ,Երևանի թիվ112 ավագ դպրոց,Երևանի Ս.Խանզադյանի անվան թիվ 184 դպրոց ,Երևանի Գ.Գյուլբեկյանի անվան թիվ 190 ավագ դպրոց) կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի արտահերթ նիստ

/նիստը հրավիրվել է 2025 թվականի փետրվարի 10-ին /

Նիստին մասնակցել են
ՀՀԿԳՄՍ նախարարության ԿԶՆԱԿ հիմնադրամից Լիլիթ Մկրտչյանը,
թիվ 112ավագ դպրոցից ուսուցիչ Աշխեն Ճահբազյանը,ծնող Մարիամ Զաքարյանը,
թիվ 184 ավագ դպրոցից ուսուցիչ Արև Միքայելյանը , թիվ 190 ավագ դպրոցից ուսուցիչ Գոհար Բալյանը ,ծնող Նազելի Ոսկանյանը , թիվ 105 ավագ դպրոցից ուսուցիչ Նարինե Միլիտոնյանը , թիվ 92 հիմնական դպրոցից ուսուցիչ Գոհար Զոբանյանը,ծնող Լուսինե Մկրտչյանը:
Նիստին խորհրդակցական ձայնի իրավունքով ներկա էին նաև թիվ 112 ավագ դպրոցի տնօրեն Օվսաննա Քարամյանը ,թիվ 184 ավագ դպրոցի տնօրեն Տաթևիկ Մելքոնյանը,թիվ 190 ավագ դպրոցի տնօրեն Օլգա Սաղաթելյանը ,թիվ 105 ավագ դպրոցի համակարգող Գարիկ Տոնոյանը և թիվ 92 հիմնական դպրոցի տնօրեն Ծովինար Մարդանյանը :
Նիստից բացակայել են Հասմիկ Իսոյանը և թիվ 184 դպրոցից ծնող Լուսինե Պողոսյանը:
Սահմանված կարգի համաձայն՝ նիստը համարվել է իրավազոր:

Օրակարգում՝

1. 2025 թվականի նախահաշիվների ներկայացում

   /հաղորդող՝դպրոցի հաշվապահներ և տնօրեններ/

2. Թիվ 105 դպրոցի 2024 թվ տարեկան հաշվետվության ներկայացում

   /հաղորդող՝ 105 ավագ դպրոցի համակարգող Գարիկ Տոնոյան/

Կառավարման խորհրդի անդամները

Լսեց ին -1 Թիվ 190 դպրոցի հաշվապահ Գայանե Սաղաթելյանին ,ապա թիվ 184 դպրոցի հաշվապահ Էռնա Մովսեսյանին ,թիվ 112 դպրոցի հաշվապահ Քաղցրիկ Ղևինյանին ,այնուհետև թիվ 92 հիմնական դպրոցի հաշվապահ Աշխեն Խաչատրյանին:
Վերջիններս ներկայացրին դպրոցներին 11 ամսվա համար հատկացված բյուջեի բաշխումը՝ իրենց դպրոցների 2025 թվականի նախահաշիվները,որոնք ,կարգի համաձայն ,նախապես ուղարկվել էին խորհրդի անդամներին՝ հանգամանալից ուսումնասիրելու համար:
Յուրաքանչյուր հաշվապահի ներկայացնելուց հետո խորհրդի ներկա անդամները առանձին – առանձին քվեարկեցին՝ միաձայն հավանության արժանացնելով 2025 թվ նախահաշիվները:

Լսեցին- 2 Թիվ 105 ավագ դպրոցի համակարգող Գարիկ Տոնոյանին։Վերջինս նախ ներկայացրեց 2024 տարեկան հաշվետվությունը ,որը դեկտեմբերյան նիստին չէր ներկայացվել ,ապա խոսքը փոխանցեց հաշվապահ Գայանե Սաղաթելյանին ,որը ներկայացրեց ն 2025 թվականի նախահաշիվը։

Ի գիտություն ընդունելով առցանց նիստի քվեարկության արդյունքները՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության ենթակայությամբ գործող պետական հաստատությունների կոլոգիալ կառավարման խորհուրդը

Որոշեց

Երևանի թիվ 190 ավագ դպրոցի ,թիվ 184 ավագ դպրոցի ,թիվ 112 ավագ դպրոցի ,թիվ 105 ավագ դպրոցի և թիվ 92 հիմնական դպրոցի նախահաշիվները հավանության արժանացնել :

Կառավարման խորհրդի նախագահ՝ **Լ.Մկրտչյան** \

Քարտուղար՝ **Ա.Ճահբազյան**\

Անդամներ **Գ.Բալեյան**

Ա. Խաչատրյան

Մ.Զաքարյան

Ա.Միքայելյան

Լ. Պողոսյան

Ն.Ոսկանյան

Ն.Միլիտոնյան

Գ.Չոբանյան

Մ.Քալանթարյան

Լ.Մկրտչյան